Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալության՝
Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի փոքր և միջին ձեռնարկությունների համար
Վարկային ծրագրի պայմանագրի ստորագրման արարողություն

Երևան՝ 30 հունվարի, 2025

2025 թ.-ի հունվարի 30-ին Երևանի Հայաստանի ազգային պատկերասրահում տեղի ունեցավ «Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության ծրագրի» վարկային պահմանագրի ստորագրման արարողությունը: Արարողությանը ներկա էին JICA-ի մասնավոր հատվածի ներդրումների ֆինանսավորման բաժնի գլխավոր տնօրեն Յասուի Տակեհիրոն և ԱԿԲԱ բանկի գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը՝ Հայաստանում Ճապոնիայի դեսպան ԱՈԿԻ Յուտակայի, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Արմեն Նուրբեկյանի, ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար տիկին Լիլյա Սիրականյանի և այլ շահագրգիռ կողմերի ներկայությամբ ստորագրեցին վարկային պայմանագիրը:

Այս ծրագիրը տրամադրում է 50 միլիոն ԱՄՆ դոլարի երկարաժամկետ վարկ (մոտ 7,4 միլիարդ JPY) ԱԿԲԱ բանկին՝ բարելավելու փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման հասանելիությունը, հատկապես գյուղատնտեսության ոլորտում՝ դրանով իսկ նպաստելով կայուն տնտեսական աճին, գյուղատնտեսական արտադրանքի ընդլայնման, ֆերմերների եկամուտների ավելացման և ՓՄՁ-ների խթանմանը Հայաստանում:

Մասնավորապես, ծրագիրը կաջակցի գյուղական վայրերի ֆերմերներին և ՓՄՁ-ներին, որոնք հյուրընկալում են Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին՝ նպաստելով աղքատության կրճատմանը և լուծելով քաղաքային և գյուղական շրջանների միջև տարածաշրջանային անհավասարությունները: Ավելին, ԱԿԲԱ բանկի միջոցով ծրագիրը կլրացնի պետական սուբսիդիաները, որոնք հիմնականում ուղղված են երկրի գյուղատնտեսության ոլորտի միկրոձեռնարկություններին:

ԱԿԲԱ բանկի գործադիր տնօրեն Հակոբ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ շնորհակալություն հայտնեց՝ նշելով. «Մենք անկեղծորեն գնահատում ենք JICA-ի կողմից այս երկարաժամկետ ֆինանսավորման աջակցությունը: Այս աջակցության միջոցով մեր բանկը հետագայում կընդլայնի գյուղատնտեսության ոլորտում ՓՄՁ-ների ֆինանսավորումը՝ մեծ ներդրում ունենալով Հայաստանի կայուն տնտեսական զարգացման գործում: Հուսով ենք, որ այս համագործակցությունը խթան կհանդիսանա Ճապոնիայի և Հայաստանի միջև ֆինանսական համագործակցության խորացմանը»:

Այս նախագիծն իրականացվում է JICA-ի Ֆինանսական Ընդգրկման Խթանման Կառույցի (FAFI) և Աջակցություն Գյուղատնտեսական Մատակարարման Շղթային և Պարենային Անվտանգության Բարձրացմանը (SAFE) ծրագրի շրջանակներում, որոնք երկուսն էլ հիմնադրվել են 2023 թվականի մայիսին:

Վարկային պայմանագրի ստորագրման արարողություն

Քննարկում շահագրգիռ կողմերի միջև

(ձախից՝ պարոն Յասուի Տակեհիրո, JICA, պարոն Հակոբ Անդրեասյան, ԱԿԲԱ բանկ, և պարոն Արմեն Նուրբեկյան, ՀՀ կենտրոնական բանկ)

Պարոն Հակոբ Անդրեասյանը

հանդես եկավ գնահատանքի խոսքով

Պարոն Յասուի Տակեհիրոն

հանդես եկավ շնորհավորական խոսքով

Պարոն Արմեն Նուրբեկյանը

հանդես եկավ շնորհավորական խոսքով

Տիկին Լիլյա Սիրականյանը

հանդես եկավ շնորհավորական խոսքով